ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը.

Գևորգ Լոռեցյան

2. Զբաղեցրած պաշտոնը.

Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի տեղակալ

3. Գործուղման վայրը և ժամկետները.

Բրյուսել, Բելգիա, մայիսի 13-15, 2019 թ

4. Հրավիրող կողմը.

Եվրոպական հանձնաժողով (European Commission)

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Արևելյան գործընկերության 10-ամյակի կոնֆերանսին մասնակցություն

6. Քննարկված թեմաները.

Արևելյան գործընկերության 10-ամյա գործունեության շրջանակներում արձանագրված արդյունքների ամփոփում, հետագա ծրագրերի ու անելիքների հստակեցում, համագործակցության նոր ուղիների մշակում:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Կոնֆերանսի ժամանակ ելույթով հանդես է եկել ՀՀ ԱԳ նախարար Զոհրաբ Մնացականյանը: Կոնֆերանսի պաշտոնական մասից դուրս հանդիպում է տեղի ունեցել Հայաստանում ԵՄ դեսպան Պյոտր Սվիտալսկու հետ, քննարկվել են Հայաստանի Հանրապետության դպրոցներում ֆիզկուլտուրայի նոր՝ պիլոտային ծրագրի իրականացման ու դրա ֆինանսավորման հնարավոր ուղիների վերաբերյալ հարցերը:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Պյոտր Սվիտալսկու հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել Երևանում ավելի մանրամասն քննարկելու մոտ 60.000 եվրոյի դրամաշնորհային ծրագրի իրականացման տարբերակը:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Նախնական պայմանավորվածություն է ձեռք բերվել մայիսի 20-ին հանդիպում ունենալ Հայաստանում ԵՄ գրասենյակի ղեկավար կազմի հետ, որտեղ առավել մանրակրկիտ կներկայացվի պիլոտային ծրագիրը, դրանից ակնկալվող արդյունքները և ըստ այդմ կորոշվի ֆինանսավորման հարցը:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

17.05.2019 թ.